ԿՈԼԵԿՏԻՎ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հարություն Մարության

Հոդվածում անդրադարձ է կատարված բազմամշակույթ հասարակություններում էթնոքաղաքական կոնֆլիկտների ծագման ու զարգացման որոշ գործոններին, իսկ նման կոնֆլիկտների լուծման ուղիների որոնումներում առաջ է քաշվում անցյալի իմացության միջոցով փոխադարձ ճանաչողության ամրապնդման ու այդպիսով կոնֆլիկտը հաղթահարելու խնդիրը։ Շեշտվում է կովկասյան տարածաշրջանի հակամարտող կողմերի տարաբնույթ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև ավելի քան մեկ տասնամյակի պատմություն ունեցող հանդիպումների, քննարկումների, համատեղ իրականացվող ծրագրերի համեմատաբար ցածր արդյունավետությունը, ինչը, հեղինակի կարծիքով, պայմանավորված է թիրախային թեմատիկ հարցադրումների ու դրանց ուղղությամբ տարվող համակարգված, պետականորեն օժանդակվող քարոզչության բացակայությամբ։ Հայ-ադրբեջանական կոնֆլիկտի օրինակով առաջ է քաշվում հակամարտող կողմերի կոլեկտիվ և պատմական հիշողության գործոնի կարևորությունն էթնիկ մոբիլիզացիայի ու դրան հաջորդող ինքնության ձևափոխման գործընթացում, ուրվագծվում են այդ գործընթացի կարևոր հատկանիշները, բերվում են անցյալի նորմալացմանն ուղղված գերմանական հետպատերազմյան փորձի հիմնական դրսևորումները։ Առաջ է քաշվում այն գաղափարը, որ հակամարտության մեջ գտնվող ժողովուրդների միջև հաշտության լիարժեք կայացմանն ուղղված միջմշակութային երկխոսությունը պետք է հիմնվի անցյալի ու դրա հենքի վրա ստեղծված կոլեկտիվ և պատմական հիշողության տարաբնույթ հարցերի շուրջ կողմերի քաղաքական վերնախավի կողմից ամեն կերպ աջակցվող բաց, մասնագիտական, հետևողական, զանգվածային լայն ընդգրկում ունեցող, գուցե և տասնամյակներ տևող քննարկումներին։ Այդ կերպ, այսինքն՝ ինքնության որոշիչ տարրերից մեկի շուրջ ժողովուրդների միջև ընթացող մշակութային երկխոսությամբ ստեղծված իրական ճանաչողության և փոխըմբռնման փիլիսոփայությունը կարող է դառնալ այն հենքը, որը կբերի էթնոքաղաքական հակամարտության հիմնավոր լուծման։

I

Դժվար է միանշանակ պնդել, սակայն վերջին հարյուրամյակի փորձը կարծես թե ցուցում է հետևյալ օրինաչափությունը. բազմամշակույթ հասարակությունները ճգնաժամ են ապրում այն պարագայում, եթե այդ հասարակություններում առկա են և միաժամանակ սկսում են էական,

որոշիչ դեր խաղալ մի շարք գործոններ. ա) բազմամշակութայնությունն ուղեկցվում է բազմէթնիկությամբ, բ) բազմէթնիկությունն ուղեկցվում է տվյալ երկրում փոքր հայրենիքների գոյությամբ, գ) էթնիկ հանրությունները դրսևորում են ազգային ինքնության զարթոնքի արագ աճ, դ) հասարակությունը կառավարող քաղաքական էլիտան ձեռք է բերում ճնշիչ ռեժիմներին (տոտալիտարիզմ, ավտորիտարիզմ) բնորոշ գծեր, կամ տեղ է գտնում միանշանակ ժողովրդավարական արժեքներ դավանելու գործընթացի թուլացում:

Այս դիտարկումը չի հավակնում աքսիոմատիկ լինել, սակայն այն կարելի է հիմնավորել տարբեր օրինակներով: Այսպես, 1980-ական թթ. երկրորդ կեսից կովկասյան տարածաշրջանում տեղ գտած էթնոքաղաքական զարգացումների հիմքերը դրվել էին դեռևս խորհրդային իշխանության առաջին տարիներին, երբ գծվեցին շուրջ 70 տարի գոյատևող հայտնի սահմանները: Վրաստանի ու Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների տարածքներում տեղ գտան փոքր հայրենիքներ ունեցող այլէթնիկ ընդհանրությունների քաղաքական միավորումներ: Տարբեր էր նաև այդ ընդհանրությունների մշակույթը, երբեմն այն՝ ի համեմատ իր գերակա պետական կազմավորման, գտնվում էր նույնիսկ քաղաքակրթական տարամակարդակ հարթությունների վրա: 1980-ական թթ. երկրորդ կեսից ԽՍՀՄ-ում ծայր առած փոփոխությունների ազդեցության ներքո վերարթնացան կուտակված բազմաթիվ խնդիրներ, որոնց մեծ մասն ուներ էթնոքաղաքական հիմք: Տեղ գտան էթնիկ և ազգային ինքնության զարթոնք և աճ շատ արագ տեմպերով, ու երբ դրանք ուղեկցվեցին միութենական հանրապետության իշխող քաղաքական միավորների տարբեր դրսևորումներ ունեցող ճնշման բնույթի գործողություններով, խնդիրը վերաճեց էթնոքաղաքական կոնֆլիկտի: Արդյունքում ունեցանք ղարաբաղա-ադրբեջանական, ապա և հայ-ադրբեջանական, ինչպես նաև վրաց-աբխազական, վրաց-օսական հակամարտությունների հայտնի զարգացումները: 20-րդ դարավերջի Եվրոպայում այն իր դրսևորումն ունեցավ Հարավսլավիա պետության կործանման ու արյունոտ պատերազմների ձևով [այստեղ առկա հակամարտությունների մեջ պատմական հիշողության գործոնի դերի շուրջ տե՛ս, օրինակ, 1], Ռուսաստանում՝ ռուս-չեչենական պատերազմի տեսքով և այլն: Այս կոնֆլիկտները, որպես կանոն, ուղեկցվում էին *էթնիկ մաքրման* գործողություններով, ինչի դրսևորման առաջին օրինակներն էին սումգայիթյան իրադարձությունները, իսկ լայնամասշտաբ ձևով դրա կիրարկմանը հանդիպեցինք հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում, որի արդյունքում 1988-1990թթ. Ադրբեջանից բռնի տեղահանվեց 360.000 հայ, Հայաստանը լքեցին շուրջ 200.000 ադրբեջանցի: Ապա այս երևույթը դարձավ սովորական մի բան. Աբխազիան լքեց վրացիների մեծագույն մասը,

առ այսօր բռնի ուժով շարունակվում է մոնոէթնիկ տարածքների ձևավորման գործընթացը Հարավսլավիայում: Մոլդովայում սկսվող էթնիկ մաքրման գործընթացը կասեցվեց միայն ռուսական զինուժի միջամտությամբ: Այն տեղ չգտավ Չեխոսլովակիայում, ինչպես նաև Հունգարիայում, ինչը պայմանավորված էր, թերևս, տեղի ռեժիմների ավելի ժողովրդավարական լինելու հանգամանքով: Փոխարենն այն «սահող» բնույթ է ձեռք բերել Ղրղզստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում, Վրաստանում և այլուր:

Բնութագրական է, որ էթնիկ մաքրումը՝ որպես ԽՍՀՄ միջէթնոքաղաքական կոնֆլիկտների լուծման ձև (միջոց, գործիք), հրամցվեց, կարելի է ասել, խորհրդային կենտրոնական ղեկավարության կողմից, որը ժողովրդավարության քարոզներից անցել էր ամեն կերպ տերությունը փրկելու խնդրի լուծմանը՝ չխորշելով այդ ճանապարհին և ոչ մի, թեկուզև արյունոտ, ձեռնարկումներից: Էթնիկ մաքրման գործընթացն ուղեկցվում է, բնականաբար, բազմամշակութայնության կամ վերացմամբ, կամ էլ՝ լավագույն դեպքում, ընդգրկման ծավալների էական նեղացմամբ: Կարելի է ասել, որ «սահող» էթնիկ մաքրման գործիքի դերում այս անգամ հանդես է գալիս հենց մշակութային գործոնը, ինչի շնորհիվ այդ մաքրումը դրսի համար ձեռք է բերում անուղղակի ու, այդպիսով, ավելի քաղաքակիրթ տեսք: Այսպես, Վրաստանում՝ հայերի պարագայում, դա դրսևորվում է հայկական մշակութային օջախների, այդ թվում և դպրոցների փակմանն անուղղակիորեն օժանդակելու, հայկական եկեղեցիների բռնի վրացականացման քաղաքականության ու դրա անթաքույց պետական հովանավորչության, հայկական ազգանունների վրացական կեղծ հիմքերի փնտրտուքի և ուղղակի-անուղղակի ճնշմամբ այդ ազգանունների փոփոխման, հայերին որպես հյուր ներկայացնելու «պատմական» թեզի քարոզման, հայաբնակ տարածքների տնտեսական զարգացմանը չօժանդակելու մեջ և այլն: Նկատենք, որ խորհրդային տարիներին նմանատիպ քաղաքականություն էր վարում ադրբեջանական ղեկավարությունը, և թե ինչի դա հանգեցրեց՝ լավ հայտնի է:

Այսպիսով, վերը մենք անդրադարձանք բազմազգ պետություններում էթնոքաղաքական կոնֆլիկտների ու դրան հաջորդող էթնիկ մաքրումների մշակութային հենքին: Պետք է նշել, որ նմանատիպ (ներէթնիկ) կոնֆլիկտներից զերծ չեն նաև մոնոէթնիկ կառույցները, ինչպիսին է, օրինակ, Հայաստանը: Այսպես, Վարդենիսի շրջանում 1990-ական թվականներին մեր հավաքած դաշտային-ազգագրական նյութերը վկայում են[1], որ այդ

[1] Դաշտային նյութերը ձեռք են բերվել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Աղքատությունը և գոյատևման ռազմավարությունը Հայաստանում» թեմայի շրջանակներում տարվող հետազոտական աշխատանքների (1994թ., ղեկավար՝ Ն.Դադվիկ, վարդենիսյան արշավախմբի ղեկավար՝ Հ.Մարության), ապա՝ *NGOC/UNHCR-ի* կողմից ֆինանսավորվող «Մշակութային երկխոսություն հանուն հարմոնիկ համակեցության» (1998թ., ղեկավար՝ Հ.Պետրոսյան) և «Փախստականներ-տեղաբնակներ. փոխհարաբերությունների տասնամյա ընթացքը (ըստ Վարդենիսի և Վայոց ձորի նյութերի)» (1999թ., ղեկավար՝ Հ.Խառատյան) ծրագրերի իրագործման ընթացքում: Տե ս նաև [2, էջ 18-20, 3, c. 80]:

տարիներին շրջանի բնակչության տնտեսական, սոցիալական, ծիսական, կենցաղամշակութային ոլորտում առկա էին խոր հակասություններ արևմտա- և արևելահայկական մշակութային և արժեքային համալիրները ներկայացնող տեղացի և Ադրբեջանից փախստական հայության ենթաէթնիկ խմբերի միջև, ինչը, լայն առումով, ազգագրության մեջ հայտնի «յուրային-օտար», «մենք-նրանք» հակադրության դրսևորում էր: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ նման իրադրությունը հաղթահարելու ելքը ոչ թե միաբանության կոչերն են, այլ պարբերական շփումներն ու միմյանց ավելի լավ ճանաչելը. մեր առաջարկությունների հիմքում դրված էր միմյանց պատմությանը, ավանդական կենցաղի ու մշակույթի առանձնահատկություններին տեղեկացվելու, այսինքն՝ անցյալի, արմատների իմացության միջոցով փոխադարձ ճանաչողության ամրապնդման ու, այդպիսով, մշակութային, արժեքային հենք ունեցող ներէթնիկ կոնֆլիկտը հաղթահարելու խնդիրը:

Արդ, կարելի՞ է արդյոք նման մոտեցումը կիրառել տարբեր էթնիկ ու, հետևապես, տարբեր մշակույթներ ու արժեքային համակարգեր ունեցող ընդհանրությունների միջև կոնֆլիկտային իրադրության առկայության պայմաններում:

II

1990-ական թթ. կեսերից սկսած՝ ամեն տարի տեղի են ունենում կովկասյան տարածաշրջանի հակամարտող կողմերը ներկայացնող տարաբնույթ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքագետների, մարդու իրավունքների հարցերով զբաղվող մասնագետների, արվեստագետների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, գիտնականների, ժողովրդական դիվանագիտությունը ներկայացնող խմբերի հանդիպումներ [տե՛ս, օրինակ, 4]: Հանդիպումների հիմնական բովանդակությունը լինում է իրավիճակի վերլուծությունը և կոնֆլիկտների լուծման եղանակների որոնումները: Արվում են բազմաթիվ առաջարկներ, ձեռնարկվում են զանազան միջոցառումներ, իրականացվում էին և են բազմաթիվ համատեղ ծրագրեր, սակայն առ այսօր սայլը տեղից կամ չի շարժվել, կամ էլ նույնիսկ հետ է գնացել: Պատճառները բազմաթիվ են: Ստորև նպատակ չի դրվում վերլուծել երևույթն ամբողջությամբ, պարզապես կփորձենք անել մի քանի դիտարկում այն հարցի շուրջ, թե ինչու է սայլի արագությունը ցածր:

Առանձնացնենք երկու, մեր կարծիքով՝ հիմնական, պատճառ: Առաջինն այն է, որ այդ հանդիպումներում, որքան մեզ հայտնի է, չեն մշակվել մեկ կամ երկու ուղղորդված (թիրախային) թեմատիկ հարցադրումներ,

որոնք կարող էին դառնալ պետության կողմից անմիջականորեն օժանդակվող, նրա ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ իրականացվող քարոզչության ուղղություններ: Երկրորդ՝ նման մոտեցումներ առաջ չքաշվեցին հակամարտության մեջ գտնվող պետությունների ղեկավարության կողմից, իսկ հասարակական նախաձեռնությունների ընդգրկման մասշտաբայնությունը մնում էր և է սահմանափակ՝ պետական ղեկավար մարմինների կողմից ըստ ամենայնի օժանդակության բացակայության պատճառով: Այս գործոնը կարելի է, թերևս, անվանել քաղաքական կամքի պակաս կամ բացակայություն:

Ուրեմն, ինչը կարող էր լինել մշակութային հենքով այն հիմնական թեմատիկան, որի շուրջ կարելի էր կազմակերպել քննարկումներ՝ նպատակ ունենալով հակամարտող կողմերի ժողովուրդների մեջ ձևավորել փոխըմբռնում, որը տասնամյակների ընթացքում միայն կարող էր վերաճել իրական հաշտության կամ գոնե ինքնության այն տարրերի փոփոխության, որը թույլ կտար ոչ թե զուտ պետական-պայմանագրային մակարդակով հարաբերությունների հաստատման, այլ կձևավորեր Եվրոպական միության կովկասյան մոդելը, որն ընդունված է անվանել «կովկասյան տուն»: Մենք, իհարկե, դեմ ենք կոնֆլիկտների լուծման ինչ-ինչ սկզբունքների ընդհանրացմանը և մեկ դեղատոմս-բանալու ստեղծմանը. յուրաքանչյուր խնդիր պետք է քննարկվի, դիտարկվի իր յուրահատկությունների հաշվառմամբ:

Մեր կարծիքով ու համոզմամբ՝ հարավկովկասյան (և ընդհանուր կովկասյան) տարածաշրջանի պարագայում պետք է նայել հակամարտության մեջ գտնվող պետությունների և էթնոքաղաքական միավորումների ժողովուրդների փոխհարաբերությունների հարցի արմատին, և այդ դեպքում այնտեղ կարելի է տեսնել պատմության կամ, ավելի կոնկրետ, կոլեկտիվ և պատմական հիշողության գործոնը:

III

Ի՞նչ է կոլեկտիվ և պատմական հիշողությունը [մանրամասն տե՛ս 5[1]]: Փորձենք խիստ ընդհանուր գծերով ուրվագծել դրա հիմնական հատկանիշները:

Ըստ առ այսօր հիշողության տեսության հարցերի դասական համարվող Մ.Հալբվախսի, հիշողության բնագավառում զատորոշվում են ինքնակենսագրական հիշողությունը, պատմական հիշողությունը, պատմու-

[1] Գրքույկում արևմտյան ազգաբանական գրականության հիմնարար ու հեղինակին հասանելի աշխատությունների մանրամասն դիտարկմամբ անդրադարձ է կատարված կոլեկտիվ և պատմական հիշողության հիմնարար հասկացություններին և բաղկացուցիչ տարրերին, դրանք ձևավորող գործոններին և դրսևորման հիմնական ձևերին, կառուցման և փոխանցման մեխանիզմներին, էթնոմոբիլիզացիոն ներուժին և քաղաքական վերնախավի կողմից օգտագործումների ձևերին, անցյալի և ներկայի փոխհարաբերություններում խաղացած դերին, տրավմատիկ հիշողության որոշ խնդիրների:

թյունը և կոլեկտիվ հիշողությունը: *Ինքնակենսագրական հիշողությունը* հիշողություն է այն իրադարձությունների մասին, որոնք արդյունք են մեր կենսափորձի: Մինչդեռ *պատմական հիշողությունն* այն հիշողությունն է, որ մեզ է հասնում միայն պատմական գրառումների միջոցով: *Պատմությունն* այն հիշվող անցյալն է, որի նկատմամբ մենք չունենք «օրգանական» հարաբերություն, այն անցյալը, որն այլևս մեր կյանքի կարևոր մասը չէ, մինչդեռ *կոլեկտիվ հիշողությունն* ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունները: Հիշողությունն անխուսափելիորեն ճանապարհ է տալիս պատմությանը, երբ մենք կորցնում ենք կապը մեր անցյալների հետ: *Պատմական հիշողությունը,* բայց և այնպես, կարող է լինել կամ *օրգանական,* կամ *մեռած.* մենք կարող ենք տոնել նույնիսկ այն, ինչն ուղղակիորեն չենք զգացել, ապրել՝ պահելով նման անցյալները մեզ համար կենդանի, կամ էլ այն կարող է կենդանի լինել միայն պատմական գրառումներում, այսպես կոչված գիտելիքների գերեզմանոցներում:

Կոլեկտիվ և պատմական հիշողությունը փոխանցվում է ինչպես բանավոր (ավագներից կրտսերներին), այնպես էլ գրավոր աղբյուրներով, որոնք մատուցվում են ընտանիքում, դպրոցում, բուհում, հասարակության լայն շրջանակներին՝ նաև զանգվածային լրատվության միջոցներով: Պատմական հիշողությունը, լինելով սոցիալական հիշողության մաս, բարդ կատեգորիա է ու բաղկացած է սեփական ժողովրդի պատկերացված պատմությունից, նրա իրական, ռեալ պատմությունից, ինչպես նաև պատմության մասին ընդհանուր պատկերացումներից: Բարոյական նորմերը, որոնք մատուցվում են պատմական իրադարձությունների մեկնաբանություններում, սեփական ժողովրդի պատմության հիմնական գործող անձանց ու հերոսների վարքի նորմերը մոդելավորում են անհատի, անհատների խմբերի ու ամբողջության մեջ վերցրած ժողովրդի վարքի նորմերը: Կոլեկտիվ և պատմական հիշողությունը «ազգ, ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է [6, pp. 21, 40, 43 etc.[1]]: Այն հենված է մարդկանց գիտելիքներին և վերաբերմունքին իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ: Այդ հիշողության դրսևորումների շրջանակը ներառում է նույն բնից դուրս եկող զանազան ճյուղավորումներ, զարգացումներ, որոնք առաջին հայացքից կարող է և անմիջական կապ չունենան այդ հիշողության հետ, սակայն իրականում պայմանավորված են նրանով, սնվում են նրանից, և նրանց ամբողջությունն է, որ կազմում է ժողովրդի հավաքական

[1] Գրքում հեղինակը պատմական հիշողությունը դիտարկում է որպես ազգային ինքնության էթնիկ հենքը կազմող «էթնիկ ընդհանրություն», «ազգ» հասկացությունների վեց-յոթ հիմնական բաղադրիչներից մեկը:

հիշողությունը: Որպես ազգային ինքնության բաղկացուցիչ մաս՝ կոլեկտիվ և պատմական հիշողությունը նաև դառնում է ազգային մշակույթի անբաժան տարրը, վերջին հաշվով՝ այն գործոններից մեկը, որոնք ձևավորում են տվյալ հասարակության շրջանակներում իշխող արժեքային համակարգը:

Ստորև կփորձենք անդրադառնալ կոլեկտիվ և պատմական հիշողության այն տարրերին, որոնք, մեր կարծիքով, էական են առաջ քաշվող հարցադրման տեսանկյունից:

Նախ, կոլեկտիվ և պատմական հիշողության կարևորագույն հատկանիշներից է նրա *էթնոմոբիլիզացիոն հզոր ներուժը:* Միևնույն ժամանակ, ինչպես ազգային ինքնություն, նույնպես և կոլեկտիվ ու պատմական հիշողություն հասկացությունները ստատիկ երևույթներ չեն, այլ *ենթակա են ձևափոխումների,* որոնք կարող են լինել թե՛ ներքին զարգացումների արդյունք, թե՛ արտաքին ազդեցությունների հետևանք: Նշված երկու գործոնները, որպես կանոն, հանդես են գալիս մեկը մյուսին հաջորդելով, և երկրորդը լինում է առաջինի հետևանքների դրսևորումը:

Էթնիկ մոբիլիզացիան [մանրամասն տե՛ս 7] հասարակության կյանքում տեղ է գտնում ինչպես այդ հասարակության մեջ գործող ներքին մեխանիզմների գործի մեջ դրվելու շնորհիվ, նույնպես և պետական քարոզչական մեքենայի ուղղորդմամբ: Վերջին պարագայում պարզապես փոխվում են գումարելիների տեղերը. քաղաքական վերնախավը փորձ է անում մշակել այնպիսի ազգային ինքնագիտակցություն և ձևափոխումներ մտցնել կոլեկտիվ ու պատմական հիշողության մեջ, որը կարող է նպաստել այդ վերնախավի կողմից առաջ քաշված որոշակի քաղաքական խնդիրների շուրջ հասարակության էթնիկ մոբիլիզացիային ու, վերջին հաշվով, բերում է հասարակության քաղաքական կյանքը պետության վերնախավի կողմից վերահսկողության տակ պահելուն: Այստեղ ահա գործիքի դերում հանդես է գալիս վերը հիշատակված «մենք-նրանք» հակադրության կիրարկումը: Ինչո՞ւ: Ցանկացած հենքով (տարածքային, էթնիկ, ազգային և այլն) ընդհանրության ինքնագիտակցության բաղադրիչներից մեկը «ուրիշ»-ի, «օտար»-ի կերպարի առկայությունն է, որի հետ համեմատվում և որին հակադրվում է «մենք»-ի կերպարը: «Ուրիշ»-ի կերպարը կարող է ունենալ բացասական, չեզոք և դրական հատկանիշներ, որոշակի պայմանների ազդեցության տակ, մասնավորապես՝ հակամարտության պայմաններում, կարող է առաջանալ «թշնամու» կերպարը: Հետազոտությունները ցույց են տալիս, թե որքան մեծ նշանակություն կարող է ունենալ «թշնամու» կերպարը ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացներում: Հակամարտությունը և «թշնամու»՝ իրական կամ մտացածին, առկայությունը դառնում են ազգային համախմբան խթանիչ:

Առանց կոլեկտիվ և պատմական հիշողության դերը գնահատելու հնարավոր չէ հասկանալ էթնիկ մոբիլիզացիայի գործընթացը, այսինքն՝ քաղաքական որոշակի խնդիրների շուրջ էթնոսի մոբիլիզացիան: Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել՝ բացատրելու համար, թե ինչու էթնոքաղաքական հակամարտություններում կոնֆլիկտածին իրադարձությունների շուրջ առկա կոլեկտիվ և պատմական հիշողությունը ձեռք է բերում կարևորագույն դեր: Այդ հիշողությունը դառնում է այն հիմքը, որի վրա կառուցվում է հակամարտության ընկալումը, բացատրվում են սեփական պահանջների արդարացիությունը և հակառակ կողմի պահանջների անհիմն լինելը: Այդ հիշողությունը դառնում է այն հիմքը, որի շուրջ կարելի է համախմբել ազգի ուժերը և ուղղել որոշակի խնդիրների լուծմանը: Ավելին, էթնոքաղաքական հակամարտություններում կոնֆլիկտների շուրջ առկա կոլեկտիվ ու պատմական հիշողությունը ոչ միայն նպաստում է էթնիկ մոբիլիզացիային, այլև կարող է ծառայել հակառակ կողմի դեմ ուղղված բռնության բարոյական հիմնավորմանը:

Կոլեկտիվ և պատմական հիշողության հսկայական մոբիլիզացիոն ներուժը բացատրում է, թե ինչու է քաղաքական վերնախավը ձգտում այն պահել իր վերահսկողության տակ և ծառայեցնել որոշակի քաղաքական շահերի: Բազմաթիվ են դեպքերը, երբ որոշակի պատկերացումներ պատմության մասին ստեղծվում են քաղաքական վերնախավի կամ մտավորականության առանձին շերտերի կողմից և այնուհետև կրթության համակարգի և քարոզչության միջոցով ներմուծվում լայն հասարակություն: Այս գործընթացի մեջ հատուկ դեր խաղացող խմբերը՝ քաղաքական վերնախավը և մտավորականության որոշակի մասը, միշտ չէ, որ շահագրգռված են անցյալի մասին օբյեկտիվ հիշողությունների գոյությամբ. արդյունքում՝ փորձ է արվում խստորեն վերահսկել կոլեկտիվ և պատմական հիշողության ձևավորումը: Այլ կերպ ասած՝ իշխող վերնախավը ձգտում է, որ հասարակությունը հիշի ոչ թե այն, ինչ տեղի է ունեցել իրականում, այլ այն, ինչ ձեռնտու է հիշել վերնախավի տեսակետից: Որոշակի սահմանափակումներ ունեցող այսպիսի «վերահսկվող» հիշողության առկայությունը թույլ է տալիս հասարակությունը դարձնել ավելի կառավարելի և համախմբել որոշակի քաղաքական նպատակների շուրջ:

Հասարակության կոլեկտիվ և պատմական հիշողությունն արհեստականորեն ձևավորելու կամ ձևափոխելու քաղաքական վերնախավի ձգտման դեպքերը բազմաթիվ են: Մասնավորապես, ԽՍՀՄ տարիներին քաղաքական վերնախավի միջամտությունը հիշողության ձևավորմանը կրում էր համընդհանուր և ծայրահեղորեն կոպիտ բնույթ, ինչն իր դրոշմն է թողել ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային որոշ հանրապե-

տություններում տեղի ունեցող գործընթացների վրա:

Այսպես, օրինակ, խորհրդային իշխանության տարիներին, շնորհիվ ադրբեջանական պետական քարոզչական մեքենայի ուղղորդված գործունեության, ադրբեջանական հասարակության մեջ առաջացան և կոլեկտիվ ու պատմական հիշողության մաս դարձան որոշակի կաղապարներ ու պատկերացումներ Լեռնային Ղարաբաղի, նրա հայ բնակչության, ինչպես և ընդհանրապես հայության շուրջ: Դառնալով ադրբեջանցիների կոլեկտիվ ու պատմական հիշողության բաղադրամաս՝ այդ պատկերացումներն ակտիվ դերակատարություն ունեցան 1988 թվականից[1] սկսած՝ ղարաբաղա-ադրբեջանական իրավաքաղաքական, ապա և էթնոքաղաքական հակամարտության ձևավորման և ընթացքի պայմաններում: 1994թ. հաստատված զինադադարից հետո անցած ավելի քան մեկ տասնամյակի ընթացքում ադրբեջանական վերնախավն իրականացնում է մի քաղաքականություն, որի էությունը կարելի է բնորոշել իբրև թշնամու կերպարի ստեղծում՝ ադրբեջանական հասարակությունը համախմբելու և քաղաքական վերնախավի իշխանությունը լեգիտիմացնելու նպատակով: Օգտագործելով հակամարտությունը՝ ադրբեջանական իշխանությունները նպաստում են նրան, որ ձևավորվեն հայերի բացասական կերպար և այդ կերպարի վրա հիմնվող «պատմական հիշողություններ»:

1991-ից հետո ԽՍՀՄ նախկին հանրապետություններում սկսվում է պետական գաղափարախոսության վերակառուցման գործընթաց. եթե մինչ այդ պետական կառույցների գաղափարական հիմքը կոմունիստական գաղափարախոսությունն էր, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո այն փոխարինվում է ազգային գաղափարախոսությամբ: Սա միանգամայն տրամաբանական գործընթաց էր. նախկին միութենական հանրապետությունները վերածվում էին ազգային պետությունների: Տրամաբանական էր նաև, որ նորաստեղծ ազգային պետականության ձևավորմանը զուգընթաց պետք է ձևավորվեն նաև որոշակի պատկերացումներ ազգային պատմության մասին, որոնք կոչված են ապահովելու ազգային պետականության լեգիտիմությունը: Պետք է նաև սեփական հասարակությանը պատրաստել էթնիկ մոբիլիզացիայի և հարկ եղած դեպքում միավորել արտաքին թշնամու դեմ ուղղված գործողությունների համար: Ահա այդ նպատակով ստեղծվում են պատմության այնպիսի պատմաշարեր, որոնք փոխարինում են նախկինում գոյություն ունեցող պատկերացումներին:

[1] Բնութագրական է, որ Ղարաբաղյան շարժման ընթացքում և դրան հաջորդող տարիներին ադրբեջանական կողմում մեծ դեր է խաղում կոլեկտիվ և պատմական հիշողության հայկական մոդելը կրկնօրինակելու ձգտումը:

IV

Ինչպես վերը նշեցինք, կոլեկտիվ և պատմական հիշողության զարգացումների վրա մեծապես ազդում է դեպքերի ընթացքը, որն իր սրբագրումներն է մտցնում երևույթների ընկալման և մեկնաբանման մեջ, նաև դրսևորումների նոր ասպարեզներ բացում: Խոսքը մասնավորեցնենք հայկական նյութով, մասնավորապես՝ Ղարաբաղյան շարժման (1988-1990) մեջ հայերի ցեղասպանության հարցի շուրջ կոլեկտիվ և պատմական հիշողության գործոնի դերակատարմամբ:

Մի փոքր պատմական էքսկուրս: Հայերի 1915-23թթ. ցեղասպանությունն օսմանյան Թուրքիայում, մասամբ և Արևելահայաստանում հանգեցրեց հայ էթնոսի գերակշռող մասի ֆիզիկական ոչնչացման[1], պատմական հայրենիքի մեծագույն մասի կորստյան, հայկական Սփյուռքի ձևավորման և, որպես հետևանքներից մեկը՝ պատմական հիշողության նոր շերտի առաջացման: Սակայն ցեղասպանության թեմայի արծարծումը Խորհրդային Հայաստանում քաղաքական նկատառումներով երկար ժամանակ փաստորեն արգելված էր: Ներքաղաքական իրավիճակի փոփոխության (խրուշչովյան «ձնհալ»), նաև գրականության շնորհիվ ցեղասպանության թեմայի շուրջ տեղ գտած որոշակի ազատախոհության հետևանքով էր թերևս, որ 1965թ. ապրիլին, ցեղասպանության 50-ամյակի նշման ժամանակ, Երևանում տեղի ունեցան զանգվածային ելույթներ, որոնք այդ ժամանակների Խորհրդային Միությունում բավական անսովոր երևույթ էին [մանրամասն տե՛ս 11, 12]: Այդ ելույթները, ինչպես և դրանց նախորդող ու հաջորդող՝ գրականության ու արվեստի մեջ ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լռության մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում և գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի. ազգային-ազատագրական պայքարի, ֆիդայական կռիվների հերոսների: Անկախ պետականության թեմայի առանց կապանքների, ազատ արծարծումը գաղափարախոսական առու-

[1] Ինչպես նկատվել է, հատկապես նորագույն ժամանակներում ցեղասպանությունները խիստ հազվադեպ են հասնում իրենց առջև դրված նպատակների իրագործմանը, այն է՝ էթնիկ ընդհանրությունների վերացմանը, և ունենում են նաև չնախատեսվող հետևանքներ: Մասնավորապես, դրանք կարող են բերել նաև հակառակ արդյունքի՝ վերակենդանացնել էթնիկ կապերը և ազգային ինքնագիտակցությունը, նպաստել դրա բյուրեղացմանը [6, p. 31] և, վերջապես, ինչպես հայոց պարագայում էր, իրենցով նշանավորել հայոց էթնոգենեզի նոր փուլի սկիզբ: [Նման մոտեցումների մասին տե՛ս նաև 8, p. 331, 9, էջ 47-52, 10, c. 60].

մով շարունակում էր մնալ չհայտարարված արգելանք [տե՛ս 13, էջ 36-47, հմմտ. 14, էջ 173]: Այդ ժամանակաշրջանի եղեռնի թեման շոշափող գործերի հիմնական բովանդակությունը կարելի է ձևակերպել Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմի «խաղաղ վրեժի» պատգամով՝ «Դու պիտի վրեժ առնես ապրելով» կոչով [15, էջ 112]: Այն փաստորեն նաև ցեղասպանության հիշողության բնագավառում տարվող պետական գաղափարախոսության քաղաքականության գեղարվեստական ձևակերպումն էր: 1965թ. ելույթներին հաջորդող Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցումը և ամենամյա հարյուրհազարանոց սգո երթերը նպաստեցին ցեղասպանության հիշողության ամրապնդմանն ու դրա սերնդեսերունդ փոխանցման մեխանիզմի անխափան գործելուն:

1980-ական թվականների երկրորդ կեսից ցեղասպանության շուրջ կոլեկտիվ ու պատմական հիշողության գործոնը կրկին առաջին պլան է գալիս: Այդ պայմանավորված էր նախ և առաջ խորհրդային ղեկավարության հռչակած վերակառուցման, հրապարակայնության և դեմոկրատացման կուրսի հետևանքով զանգվածային լրատվության միջոցներում ու արխիվային-փաստագրական հենք ունեցող գեղարվեստական գրականության մեջ ծայր առած՝ հատկապես խորհրդային շրջանի պատմության վերանայման և վերագնահատման գործընթացով: Արտաքին ազդակի դեր էր խաղում նաև ադրբեջանական պատմագրության մեջ ձևավորված և տարիների ընթացքում ավելի ու ավելի լայն ծավալներ ընդունող, այսպես կոչված, «աղվանական տեսության» քարոզումը, երբ Ադրբեջանի տարածքի հայկական մշակույթի հուշարձանները հայտարարվում էին ժամանակակից ադրբեջանցիների էթնոգենեզում որոշակի դեր խաղացած աղվանների մշակույթի անքակտելի տարրեր, երբ փորձ էր արվում Լեռնային Ղարաբաղի հայության պատմամշակութային ժառանգությունը կտրել նրա հայկական արմատներից, իսկ ղարաբաղցիներին էլ ներկայացնել որպես հայացված աղվանների սերունդներ: Ստացվում էր, որ ժամանակակից ադրբեջանցիներն ու Լեռնային Ղարաբաղի հայերն ունեին ընդհանուր նախնիներ ու, այդպիսով, նրանք պատմամշակութային տեսանկյունից կարծես թե դառնում էին «երկպորտ եղբայրներ» *(cousins):* Ամեն հայկականի ժխտումն ուներ միանշանակորեն գիտակցված բնույթ և նպատակ էր հետապնդում Ղարաբաղի հայերի էթնիկ ինքնագիտակցության մեջ ոչնչացնել դրա բազմաթիվ տարրերը՝ հայկական ծագումը, պատմական հիշողությունը, էթնիկ խորհրդանիշերը և այլն, թուլացնել հայկական արժեքային կողմնորոշումների կառուցվածքը և, այդպիսով, ազգային պատկանելության փոփոխության համար պատմահոգեբանական հող նախապատրաստել: Հենց այս էլ

հայերի կողմից մեկնաբանվեց որպես ոտնձգություն ազգային ինքնության ու, մասնավորապես, պատմական հիշողության նկատմամբ և, ի թիվս այլ էական գործոնների, ոտքի հանեց պայքարի հանուն «պատմական ճշմարտության» վերականգնման: Վերջին հանգամանքին մեծ նշանակություն էր տրվում՝ պայմանավորված հատկապես այն համոզմունքով, որ ստալինիզմի տարիներին տեղ գտած անարդարությունների քննադատությունը պետք է հանգեցնի այդ սխալների ուղղմանը: Ուստի, պատահական չէ, որ Շարժման հենց սկզբից որդեգրվեց 1921թ. Կովբյուրոյի հայտնի որոշման (երբ կուսակցական մարմնի որոշմամբ 95% հայ բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղի տարածքը տրվեց Ադրբեջանին) համակողմանի դիտարկումն ու որպես Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի պատմաիրավական հենք՝ մերժումը: Այդ և նման այլ քննարկումներն ընթանում էին ոչ միայն պատմագիտական պարբերականների, այլև մամուլի էջերում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ, Օպերայի հրապարակի հարթակից տասնյակ և հարյուր հազարավոր մարդկանց ներկայությամբ: Այսպիսով, պատմական հիշողության գործոնն աստիճանաբար, քայլ առ քայլ դառնում էր Շարժման գաղափարախոսության գիտակցվող կամ չգիտակցվող, սակայն կարևորագույն շարժիչ ուժը [տե՛ս 16, էջ 56-57]:

Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից մեկ շաբաթ անց տեղի ունեցան սումգայիթյան իրադարձությունները, երբ առանձնակի դաժանությամբ, XXդ. սկզբի հայերի ցեղասպանության թուրքական մեթոդներով սպանվեցին Ադրբեջանի շուրջ երեք տասնյակ, գուցե և ավելի, հայազգի քաղաքացիներ: Այս կոտորածները (որոնց շարունակությունն էին Բաքվի հայության 1990թ. հունվարյան կոտորածները) հայերի կողմից միանշանակ ընկալվեցին որպես ցեղասպանություն և վերարթնացրին կոլեկտիվ ու պատմական հիշողության ամենահզոր՝ Մեծ եղեռնի շերտը: Ղարաբաղյան շարժումը, որն իր սկզբնավորման փուլում ուղղորդված էր Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման սատարմանն ու այդ կերպ տարածքային պատկանելության հարցում պատմական արդարության վերականգնմանը, ստացավ նոր խթան:

Ղարաբաղյան շարժման տարաբնույթ աղբյուրների (ելույթներ, մամուլի անդրադարձեր, ցուցապաստառներ և այլն) քննությունը ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանության թեման, որպես հետևանք 20-րդ դարասկզբի Մեծ եղեռնի և 20-րդ դարավերջի հայերի նոր կոտորածների ու ջարդերի, Շարժման տարիներին շարունակում էր մնալ հայոց կոլեկտիվ ու պատմական հիշողության կարևորագույն դրսևորումը: Նյութի դիտարկումը միաժամանակ այն համոզմունքն առաջացրեց, որ այդ հիշողությունը ձևափոխման

գործընթաց է ապրում. 20-րդ դարավերջի ճգնաժամից դուրս գալու փորձը զուգակցվում է 20-րդ դարասկզբի ճգնաժամի[1] հաղթահարման համար մղվող պայքարով, որի դրսևորումներից մեկն էլ այն է լինում, որ արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշը տեղը զիջում է մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով: Եվ գուցե հայ ինքնության մեջ տեղ գտած հենց այս փոփոխությունն էր[2], որ հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի ազատագրման համար մղվող պայքարի հաջողությանը:

Նյութերի վերլուծությունը ցուցում է, որ մարդկանց համար հենց ցեղասպանություն ընկալվող սումգայիթյան իրադարձությունների գնահատականն է դառնում խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված բազմաթիվ կաղապարների փորձաքարը, խոչընդոտ, որի վրա սայթաքում են, որը չեն կարողանում հաղթահարել շուրջ յոթանասուն տարի քարոզվող խորհրդային պարադիգմերը՝ ճշմարտության հայելի մամուլը, ժողովուրդների անխախտ բարեկամությունը, ԽՄԿԿ-ն, իր քաղաքացիների բարօրության մասին օրուգիշեր մտածող Կենտրոնը, հայության գոյապահպանության նեցուկ ընկալվող խորհրդային-ռուսական բանակը, ամենաարդար դատական համակարգը և այլն: Ուսումնասիրողի առջև վեր է հառնում Շարժման ընթացքում ամբողջատիրական գաղափարախոսության կապանքները թոթափած քաղաքացին և, որ տվյալ համատեքստում կարևոր է՝ ազատ մտածողության ձևավորման հարցում նրա համար ուղենիշային դեր է ստանձնում հենց կոլեկտիվ և պատմական հիշողության կարևորագույն՝ ցեղասպանության հիշողության տարրը, որը դրսևորվում է սումգայիթյան իրադարձությունները որպես ցեղասպանություն ընկալելու, դրա քաղաքական գնահատականի պահանջի և սեփական գնահատական տալու, անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման և պատժի պահանջի, իրականացման և կազմակերպման հնարավոր մեղավորների մատնանշման, դատավարության գնահատականի մեջ: Այսինքն՝ ցեղասպանության գործոնը դառնում է այն լոկոմոտիվը, որը

[1] Ղարաբաղյան շարժման ժամանակ հիշողության մեջ մարդիկ, որպես կանոն, «հետ էին գնում» շուրջ մեկ դար, ոչ ավելի: Հայ իրականության մեջ, որտեղ մեծ ընտանիքները մեկ դարից քիչ ավելի է, ինչ փոխարինված են փոքր ընտանիքներով, սակայն ընտանեկան-ազգակցական համակարգում այս կամ այն կերպ շարունակում են գոյատևել գերդաստանային հարաբերությունների ինչ-ինչ տարրեր ու, մասնավորապես, դեռևս համեմատաբար ուժեղ է սերունդների կապը հիշողությունների փոխանցման իմաստով, այս մեկդարյա ժամանակահատվածը համապատասխանում է ինքնակենսագրական ու կոլեկտիվ հիշողությունների հանրագումարին: Եթե ավելի որոշակի, ապա ցեղասպանության հիշողությունը հարյուր հազարավոր մարդկանց համար շարունակում էր մնալ կոլեկտիվ և անձնական հիշողությունների ոլորտում, այն դեռևս չէր դարձել պատմություն լայն իմաստով: Շատ շատերի համար այդ հիշողությունն ինքնակենսագրական մակարդակի վրա էր, նրանց շրջապատող տարբեր տարիքային խմբերի մեջ էր. դեռևս թարմ էին տատիկ-պապիկներից կամ էլ նրանց փոխանցմամբ՝ ծնողներից լսված ցեղասպանությանը կամ գաղթին այս կամ այն կերպ առնչվող, հուզականության մեծ շերտ պարունակող պատմաշարերը: Ավելի երիտասարդների պարագայում, ում համար այս կապն ինչ-ինչ պատճառներով կտրված էր, առաջին պլան էր մղվում գիտելիքի ձևով ձեռք բերված պատմական, պատկերացված հիշողությունը:

[2] Մյուս կարևորագույն փոփոխությունների մասին տե՛ս, մասնավորապես [17, էջ 55-56]:

հնարավորություն է ընձեռում քայլ առ քայլ փոխել հին պատկերացումները և կարծրատիպերը, ձևափոխել հին արժեքներին հենված ինքնությունը և աստիճանաբար ձևավորել նոր ինքնություն: Այսպիսով, Ղարաբաղյան շարժման մեջ ցեղասպանության թեման, դուրս գալով սկզբնական շրջանին բնորոշ ցավի ու մորմոքի սահմաններից, մարդկանց մղում էր ակտիվ գործողությունների, որոնք, ի վերջո, ավարտվեցին արմատական փոփոխությունների ակնկալիքով ստեղծված նոր խորհրդարանի ձևավորմամբ:

1990-ական թթ. երկրորդ կեսից ցեղասպանության ճանաչման և այն իրականացնողների դատապարտման համար պայքարի ճանապարհով նպատակին հասնելու մոտեցումը ձեռք բերեց պետական երանգ, ուստի և, առաջին հայացքից, թուլացան ցեղասպանության հիշողության ժողովրդական դրսևորումները: Սակայն որ դա այդպես չէ, ակներև դարձավ Գուրգեն Մարգարյանի եղերական սպանությանը[1] հաջորդած զանգվածային ժողովրդական ելույթների ժամանակ:

V

Այսպիսով, հակամարտության մեջ գտնվող հարավկովկասյան երկու երկրների օրինակով համառոտ դիտարկվեց, թե ինչպիսի ակտիվ դեր ունի կոնֆլիկտածին հարցերի շուրջ կոլեկտիվ ու պատմական հիշողությունն էթնիկ մոբիլիզացիայի ու դրան հաջորդող ինքնության փոփոխության գործընթացում: Արդյունքում՝ ունենք երկու ժողովուրդ, որոնց միջև այսօր առկա հակամարտությունը մեծապես պայմանավորված է նաև նրանց՝ իրար նկատմամբ ունեցած 20-րդ դարի ընթացքում գոյատևող և նոր զարգացումների բերած կոլեկտիվ ու պատմական հիշողության տրամագծորեն տարբեր ընկալումներով:

Նկատենք, որ նման երևույթը բնորոշ է ոչ միայն Ղարաբաղյան հակամարտությանը: Դրա բազմաթիվ ու բազմաբնույթ դրսևորումների կարելի է հանդիպել ռուս-չեչենական, ռուս-ուկրաինական, հետխորհրդային տարածքի այլ կոնֆլիկտային իրավիճակներ ունեցող տարածաշրջաններում: Պատմական հիշողության հենքի վրա ազգային ինքնության փոփոխության գործընթացի ականատես ենք նաև Եվրոպայում, աշխարհի այլ երկրներում: Ստորև, սակայն, համառոտ անդրադարձ կարվի միայն մեկ՝ քաղաքակիրթ օրինակի:

Պատմական հարցադրումները միշտ էլ կարող են փոխվել: Դա կապված է ժամանակի թելադրանքի հետ, ինչպես եղավ Գերմանիայում

[1] Գուրգեն Մարգարյանը ՀՀ զինված ուժերի սպա էր, և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում գործուղվել էր Բուդապեշտ անգլերեն լեզվի դասընթացների: 2004թ. փետրվարի 19-ի վաղ առավոտյան, քնած վիճակում նա դաժանորեն սպանվել էր այդ նույն դասընթացների մասնակից ադրբեջանցի սպայի կողմից:

Երկրորդ համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո: Այսինքն՝ դա փոփոխման ենթակա է, ինչն իր հետևից բերում է ինքնության փոփոխության դրսևորումների: Բայց այդ հարցադրումների փոփոխության ողջ գործընթացի ժամանակ պատմական հիշողությունները շարունակում են գոյատևել: Գերմանիայի պարագայում շրջադարձային նշանակություն ունեցավ 1959թ. Թեոդոր Ադորնոյի դասախոսությունը *«What does it mean to come to terms with the Past»* («Ի՞նչ է նշանակում գալ համաձայնության (հարմարվել) անցյալի հետ») վերնագրով: Նրա առաջ քաշած սկզբունքի տարրերից մեկն այն էր, որ նա գերապատվություն էր տալիս *«working through the past»* սկզբունքին, ինչը պահանջում էր շարունակական ինքնաքննադատական պարտավորություններ ի տարբերություն *«mastering the past»* սկզբունքի, ինչը ենթադրում է անցյալի մասին լռելը: 1970-80-ական թթ. մեկնաբանները և քաղաքական լիդերները կոչ էին անում անցյալի նորմալացման՝ *«a «normalization» of the past»:* Եվ արևմտագերմանական իշխանությունները մշակեցին ծրագիր, ստրատեգիա՝ ուղղված անցյալի նորմալացմանը: Այն ունեցավ տարբեր արտահայտություններ, որոնցից էր երկրի քաղաքական ղեկավարության՝ անցյալի պրոբլեմներն ինստիտուցիոնալ մակարդակով լուծելու հաստատակամությունը. սրա դրսևորումներից էր Իսրայելին վճարված փոխհատուցումը (գուցե նաև՝ խորհրդային գերիներին մի քանի տարի առաջ վճարված գումարները): Երկրորդ՝ Գերմանիայի և գերմանացիների՝ որպես բարոյական ազգի, նոր կերպարի ստեղծում, ձևավորում, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ի տարբերություն 1950-ական թթ. սերնդի, նոր սերունդը ցանկանում էր ավելի արմատական դասեր քաղել անցյալից: Արդեն 1970-ական թթ. կանցլերը պատկերում էր Արևմտյան Գերմանիան որպես նորմալ ազգ *(Normal Nation),* որն ունի նույն պրոբլեմները, ինչ մյուս արևմտյան պետությունները և որ նրա պատմությունը ներառում է ինչպես «վերելքներ, այնպես էլ վայրէջքներ»: Ներկայացվում էր, որ նոր լուծումները կախված են հներից, որ անցյալի կերպարները *(images),* ինչպես անցյալն ինքը, ներկայի համար միաժամանակ և՛ ռեսուրսներ են, և՛ հարկադրանք: Այսինքն, որ անցյալի կերպարները ոչ թելադրվում են անցյալի կողմից և ոչ էլ ամբողջությամբ ստեղծված են ներկայում, այլ արդյունք են անընդհատ շարունակվող երկխոսության, որտեղ ավելի վաղ եղած կերպարները ձև են տալիս և հարկադրում են, թե ինչ կարելի է անել նրանց հետ ավելի հաջողակ ներկայում: Նորմալացման գործընթացի մեկ այլ դրսևորման ձև էր, այսպես կոչված, ռեգուլյարացումը կամ ռիտուալացումը: Պատմական պատասխանատվության ընդունումը և ճանաչումը դարձան քաղաքական լիտուրգիայի պարբերաբար դրսևորվող հատկանիշներ, ինչպիսիք են տարբեր հուշային տարեթվերի նշումները՝

օրինակ, 8 մայիսի 1945թ., 1 սեպտեմբերի 1939թ., այցելություններ նախկինում համակենտրոնացման ճամբարների տարածքներ և այլն [մանրամասն տե՛ս 18, pp. 259-288, 19, pp. 381-402]:

Այլ կերպ ասած՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տասնամյակներին մարդկությունն ականատեսը եղավ կոնֆլիկտածին որոշակի խնդիրների շուրջ կոլեկտիվ ու պատմական հիշողության քննական դիտարկման ու վերարժևորման հենքով գերմանական ինքնության ձևափոխմանը և, ի վերջո, ֆրանկո-գերմանական լիարժեք հաշտության կայացմանը, ինչի շնորհիվ էր մեծապես պայմանավորված միացյալ Եվրոպայի կայացման գործընթացը:

Կոլեկտիվ և պատմական հիշողության հարցերով զբաղվող գիտնականները (Մորիս Հալբվախս, Էրիկ Հոբսբաում, Բարի Շվարց, Ջեֆրի Ք.Օլիք, Էվիատար Զերուբավել և այլք) նկատում են, որ հաճախ «անցյալը» ներկայացնում է մշակութային կառույց՝ պատրաստված ներկայում ու, այդպիսով, սուբյեկտ է հանդիսանում բազմաթիվ ժամանակակից շահերի, որոնք հենվում են նրա վրա: Այսինքն՝ ներկա պայմաններում առկա ազգային ինքնության ձևափոխմանը կարելի է հասնել նախ և առաջ անցյալի (ու դրա հենքի վրա ստեղծված կոլեկտիվ ու պատմական հիշողության) քննական դիտարկման ճանապարհով: Բոլոր պարագաներում դա երկարատև, տասնամյակներ պահանջող գործընթաց է, համենայն դեպս միանշանակ է, որ դրան չես հասնի տարամակարդակ պատվիրակությունների բազմաթիվ փոխայցելություններով կամ տնտեսական համագործակցության և բարեկամության պայմանագրեր կնքելով և կամ հասարակական կազմակերպությունների ակտիվիստների սեմինարներով ու քննարկումներով: Այդ գործընթացը պետք է հենվի եվրոպական քաղաքակիրթ օրինակով տարվող միջմշակութային երկխոսությանը, որի հիմքում էլ, մեր կարծիքով, պետք է դրված լինեն՝ քաղաքական վերնախավի կողմից ամեն կերպ աջակցվող [հմմտ. 20], հակամարտության մեջ գտնվող կողմերի ժողովուրդների կոլեկտիվ ու պատմական հիշողության տարաբնույթ հարցերի շուրջ բաց, մասնագիտական, հետևողական, զանգվածային լայն ընդգրկում ունեցող քննարկումները [հմմտ. 21, 22, էջ 76-78][1]: Այդ կերպ, այսինքն՝ ինքնության որոշիչ տարրերից մեկի շուրջ ժողովուրդների միջև ընթացող մշակութային երկխոսությամբ ստեղծված իրական ճանաչողության և փոխըմբռնման փիլիսոփայությունը կարող է դառնալ այն հենքը, որը կբերի էթնոքաղաքական հակամարտության հիմնավոր լուծման:

Սեպտեմբեր, 2007թ.

[1] Հմմտ. նաև «Առկա» լրատվական գործակալության տարածած այն տեղեկատվության հետ, որ, ինչպես ցույց են տալիս Հայաստանի բնակչության հարցումները, հարցման ենթարկվածների 57,1%-ը Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման գլխավոր խոչընդոտ է դիտում պատմական թշնամությունը [23]:

Աղբյուրներ և գրականություն

1. *Kaplan Robert D.,* Balkan Ghosts: A Journey Through History, 1994.
2. *Մարության Հ.,* Վարդենիսի շրջանի հայության ներէթնիկ շերտերը. փոխհարաբերության հարցեր, Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում, 1, Հանրապետական գիտական նստաշրջան: Զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1997:
3. *Марутян А.,* “Свои” как “чужие”: конфликты в моноэтничных обществах,. VI Конгресс этнографов и антропологов России. Тезисы докладов. Санкт-Петербург, 2005.
4. *Шнайдер-Детерс Винфрид* (издатель). Южный Кавказ – нестабильный регион замороженных конфликтов. Материалы международной конференции по Кавказу Фонда Фридриха Эберта, Тбилиси, 2002.
5. *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Ե., «Նորավանք», 2006:
6. *Smith Anthony D.*, National Identity. Reno, Las Vegas, London: University of Nevada Press, 1991.
7. *Զոլյան Մ.,* «Ղարաբաղյան հիմնահարցը որպես ադրբեջանցիների պատմական հիշողության և ազգային ինքնագիտակցության ձևավորման գործոն (ադրբեջանական պետական ազգային քաղաքականության հայեցակարգի վերլուծություն)» թեկնածուական ատենախոսություն, Ե., 2005:
8. *Adalian R.,* A Conceptual Method for Examining the Consequences of the Armenian Genocide. - Problems of Genocide. Proceedings of the International Conference on “Problems of Genocide”. Cambridge, Mass. and Toronto: The Zoryan Institute, 1997.
9. *Պետրոսյան Ա.,* Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն, «Հայացք Երևանից. հայագիտական», 1997, թիվ 4:
10. *Абрамян Л.,* Армения и армянская диаспора: расхождение и встреча, Диаспоры, 2000, N 1-2.
11. Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 2005:
12. *Առաքելյան Վ.,* 1965թ. ապրիլի 24-ը, «Հայք», 23 ապրիլի 1996, թիվ 76 (649):
13. *Եղիազարյան Ա.Կ.,* Եղեռնի արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, թիվ 4:
14. *Կապուտիկյան Ս.,* Էջեր փակ զզրոցներից, Ե., 1997:
15. *Կապուտիկյան Ս.,* Մտորումներ ճանապարհի կեսին, Ե., 1961:
16. *Մարության Հ.,* Ցեղասպանության հիշողությունը որպես նոր ինքնության ձևավորիչ (1980-ական թվականների վերջ - 1990-ական թվականների սկիզբ), Պատմա-բանասիրական հանդես, 2005, թիվ 1:
17. *Մարության Հ.,* Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբաղյան շարժման տարիներին, «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները». Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ, Ե., 2003:
18. *Olick Jeffrey K.* What Does It Mean to Normalize the Past?: Official Memory in Ger-

man Politics Since 1989. – States of Memory. Durham and London: Duke University Press, 2003.
19. *Olick Jeffrey K.* Genre Memories and Memory Genres: A Dialogical Analysis of May 8, 1945 Commemorations in the Federal Republic of Germany. – American Sociological Review, Vol. 64, No. 3 (June, 1999).
20. *Mehdi Niyazi.* The East and the West: complicated situations in different understanding. – The Eurasian Politician, Issue 1 (May 21st, 2000), point 3.3
21. *Marutyan Harutyun.* Historical Memory: Opportunity or Obstacle? – Regional Dynamics of the Black and Caspian Sea Basins. IREX Alumni Conference, Odesa, 2000.
22. *Marutyan Harutyun.* Historical Memory in the Scope of Ethno-Cultural Unity and Southern Caucasian Variety. – The South Caucasus Network for Civil Accord. The South Caucasus: Ethnic-Cultural Diversity and Regional Unity. Materials of III International Conference. Tbilisi, 2003.
23. Public opinion survey, conducted as part of “Armenia and Azerbaijan at a "Neither War Nor Peace" Crossroad: How to Overcome Stereotypes” project. – 1 June 2005, ARKA-News (Armenia), Document ARKA000020050601e1610018h.

КОЛЛЕКТИВНАЯ И ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ В ДИАЛОГЕ МЕЖДУ КУЛЬТУРАМИ

Арутюн Марутян

Резюме

В статье рассматриваются некоторые факторы возникновения и развития этно-политических конфликтов в поликультурных обществах, а при поисках путей их решения ставится задача укрепления взаимного познания через более глубокое постижение прошлого. Указывается на сравнительно низкую плодотворность продолжающихся более одного десятилетия встреч, обсуждений, совместно выполненных проектов между представителями различных общественных организаций кавказского региона. По мнению автора, это является следствием отсутствия разработок целевых тематических постановок вопросов и систематически проводимой пропагандистской работы, имеющей всестороннее содействие со стороны государства. На примере армяно-азербайджанского конфликта выдвигается значимость фактора исторической и коллективной памяти противоборствующих сторон в процессе

этнической мобилизации и последующем процессе трансформации идентичности, вырисовываются важные составляющие этого процесса, приводятся основные проявления послевоенного немецкого опыта по нормализации прошлого. Выдвигается идея, что межкультурный диалог, направленный на примирение народов, находящихся в конфликте, должен основываться на открытых, профессиональных, последовательных, длящихся, возможно, десятилетия и имеющих широкий массовый охват обсуждениях, касающихся различных вопросов исторической и коллективной памяти, и что этот процесс должен быть всячески поддержан политической верхушкой сторон. Лишь такой подход, т.е. создание философии реального познания и взаимопонимания на основании культурного диалога между народами об одном из решающих элементов идентичности, может стать той основой, которая приведет к глубинному решению этно-политических конфликтов.